«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝ Թալինի թիվ 2 հիմնական դպրոց

Թալին 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Աստվածաշնչյան առակների դասավանդման մեթոդիկան և արդյունավետությունը……5

Աստվածաշնչյան առակներից մի քանի օրինակներ և նրանց դաստիարակչական ենթատեքստը……9

Եզրակացություն……13

Օգտագործված գրականության ցանկ……15

Ներածություն

Ուսուցման կարևորագույն գործառույթներից է անձի մտավոր զարգացումը, իմացական որակների ձևավորումն ու կատարելագործումը: Երեխայի մտավոր զարգացումը ավելի արագ է իրականանում և անմիջական կապ ունի գիտելիքների ձեռք բերման ընթացքի, ուսուցման գործընթացի կառուցվածքի և առանձնահատկությունների հետ: Ուսուցման ընթացքում տեղի է ունենում աշակերտների զգայական ընկալումները, շարժողական, մտավոր, ինտելեկտուալ, կամային, էմոցիոնալ, մոտիվացիոն ոլորտների ճանաչում ու զարգացում: Այս ընթացքում աշակերտները սկսում են ընկալել իրենց կարդացածն ու սովորածը, որպես ոչ միայն զուտ օրվա դաս, այլ որպես ուսուցման կարևոր կետ, որը իրենց տալիս է խորհուրդ կամ առաջարկում է տալ սեփական գաղափարները տվյալ դասի մասին:

Մանկավարժության մեջ ուսուցման գործընթացի կառուցվածքի վերաբերյալ ձևավորվել են տարբեր մոտեցումներ: Ուսումնական մի շատ հետաքրքիր ու կարևոր կառուցվածք է առաջարկում ամերիկացի մանկավարժ և հոգեբան Բենջամեն Բլումը: Ըստ նրա՝ ուսուցման համակարգը ունի գործընթացին հատուկ 6 հիմնական աստիճան՝ գիտելիք, իմաստավորում, կիրառում, վերլուծություն, համադրում, կշռադատում կամ գնահատում: Ուստի հիմնված այս վեց կարևոր կետերի վրա պետք է կազմակերպել դասապրոցեսն այնպես, որ երեխաները մաքսիմալ ստանան իրենց հուզող կամ հետաքրքրող բոլոր բաները, որպեսզի հետագայում աստիճանաբար բարդացող դասընթացները ավելի հեշտ տրվեն:

Որպես դասընթացների մաս դիտարկվում են նաև առակները, որոնք ունեն ոչ միայն զարգացնող ու հետաքրքիր բովանդակություն, այլ նաև դաստիարակչական դեր են տանում: Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ: Այն այլաբանական բովանդակություն ունեցող փոքրածավալ պատմողական ստեղծագործություն է, որում հաճախ մարդկանց փոխարեն հանդես են գալիս կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչներ, տիեզերական մարմիններ, որոնք անձնավորված են: Նրանց փոխհարաբերություններն այլաբանորեն ներկայացնում են մարդկային կյանքի զանազան խրատական, հաճախ երգիծական

բովանդակություն։ Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից։ Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը։ Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն[1]։

Առակագրության ժանրում իրենց հեղինակավոր դերն ունեն 12-13-րդ դարերի հայ նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին։ Մխիթար Գոշն առակների մեջ առանձնացնում էր 2 մաս՝ բուն պատմվածքը և խրատական եզրակացությունը։ Պատմվածքում նա շեշտում էր խրատ, գաղափար, օրինակ, եղանակ մտքերը, ըստ Գոշի՝ առակը լինում է 3 տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական։ Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ քիչ ունեն կամ առհասարակ չունեն կատարելիք գործողություն ու հիմնականում պասիվ դեր են կատարում։ Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն և բույսերին՝ իբրև գործող անձերի, իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են, ովքեր ունեն իրենց հատուկ բնավորությունն ու որոշակի վարքով են հայտնի լինում[2]։

Առակը ստեղծվեց, որպես ընդօրինակման ու դաստիարակչական միջոց, որով մարդուն խրատում ու կրթում են, աշխարհընկալման նոր հորիզոններ են տալիս։ Այն, որպես դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ, օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրել, ավելի գնահատող ու կարեկցող լինել։ Ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ։

Իրենց տեսակի ու բովանդակության մեջ բավականին հետաքրքիր ու առանձնահատուկ են հատկապես Աստվածաշնչյան առակները, որոնց դաստիարակչական բովանդակությունը շատ մեծ է։

---

[1] Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 694։
[2] Մ. Աբեղյան, Երկեր Դ, Երևան, 1966:4

Աստվածաշնչյան առակների դասավանդման մեթոդիկան և արդյունավետությունը

Աստվածաշնչի առակների հիմնական թեմատիկան հոգևոր արժեքներն ու աստվածային կատարելության անքննելիության ներկայացումն է, որը այլաբանորեն ամփոփվում է առակի մեջ ու հնարավորինս մատչելի հասցվում է ընթերցողին: Աստվածաշնչյան առակներում ներկայացված կերպարները հանդիսանում են իրար հակադիր ու իրարից բնավորությամբ ու բարոյական արժեքներով տարբեր կերպարներ:

Աստվածաշնչյան առակների դերն ու իմաստը երեխաների համար կարող է շատ մեծ լինել՝ կապված այդ առակների հոգևոր և հոգեբանական նշանակությամբ: Աստվածաշունչը լինելով բարդ ու երեխաների համար երբեմն շատ խառն ու դժվարընկալելի նկարագրություններով հարուստ՝ առավել հեշտ ու հասկանալի է դառնում առակների միջոցով: Աստվածաշնչյան առակները լի են դաստիարակչական և մոտիվացիա ստեղծող սյուժեներով: Աստվածաշնչյան առակների հիմնական գաղափարը մարդկային դաժանությունները, անարդարությունները, մեղքերը այլաբանական ու բոլորին մատչելի տեսքով մատուցելն է, ինչը թույլ է տալիս գրեթե բոլորին շատ հեշտ ընկալել միտքն ու կարծիք կազմել տվյալ առակի կամ իրավիճակի շուրջ:

Աշակերտի արժեքային կողմնորոշման, գիտակցության, վարքագծի ձևավորման սկզբնական փուլը սկսվում է դեռևս տարրական դպրոցից և կրում շարունակական բնույթ՝ հասնելով մինչև հասուն տարիք: Երեխան դեռևս տարրական դպրոցից բացահայտում է գեղեցիկը, հասկանում է արդարության ու անարդարության սկզբունքը, ընկալում է սերը և նման համամարդկային արժեքներ, որոնք հիմք են դնում անհատի հոգևոր աշխարհում և դառնում են նրա եսի մի մասը: Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են՝ ըստ ուսումնական բնագավառների ու հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

Որպեսզի աստվածաշնչյան առակները դառնան հնարավորինս հասկանալի և, այսպես ասած, մտնեն երեխայի գիտակցության ու հոգևոր պատկերացումների

դաշտ, անհրաժեշտ է դրանք ոչ միայն պարզապես տալ կամ որպես օրվա թեմա անցկացնել, այլ նաև դրանց վերաբերող ամենատարբեր միջոցներ կիրառել՝ բլից հարցեր տալ, վարժություններ հանձնարարել, աշակերտների միջև քննարկումներ անցկացնել, թույլ տալ, որպեսզի աշակերտն ինքն արտահայտի իր կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ և նույնիսկ հանձնարարել շարադրություն գրել, թե կոնկրետ ի՞նչ հասկացավ երեխան տվյալ նյութից ու տվյալ առակում ի՞նչն էր իր համար անհասկանալին, անընդունելին կամ ինչպե՞ս կվարվեր ինքը այդ նույն իրավիճակում:

Ինչպես երևում է դպրոցական պրակտիկայի մեր ուսումնասիրություններից՝ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են կարդում առակներ, հետաքրքրությամբ հետևում են առակներում իրենց հավանած կերպարների ճակատագրին ու ակտիվորեն քննարկումներ են անցկացնում՝ ներկայացնելով նաև իրենց անձնական տեսակետն այդ թեմայի վերաբերյալ: Առակներում հանդես եկող կենդանիների, բույսերի, տարբեր առարկաների ու բնության երևույթների միջոցով ակնարկվում են մարդիկ՝ իրենց դրական ու բացասական գծերով, ներկայացվում են մարդկային արատները, առաքինությունները և այլն: Առակների միջոցով սովորողը նոր որակներ է ձեռք բերում, այլ կերպ է մոտենում առօրյայում իրեն հանդիպող դեպքերին ու դրանց վերաբերյալ իր մոտեցումները դառնում են ավելի հասուն, արդարացիորեն դիտարկվում և վերլուծվում են մարդկային տարբեր բնավորությունները, քննադատվում են բացասականը՝ չարությունը, ծուլությունը, ագահությունը, ժլատությունը, չկամությունը և այլն:

Եզոպոսի, Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու, Կռիլովի, նաև Աստվածաշնչի առակները որոնք ներառված են դասագրքերում, սովորողին դաստիարակելու, կրթելու մեծ հնարավորություն են տալիս: Ի լրումն այս ամենի՝ հոգևոր, բարոյական որակների ձեռքբերման առումով՝ առավել բովանդակային ու հզոր են Հիսուսի առակները, որոնք իրական կյանքից վերցված պատմություններ են և Հիսուսի կողմից պատմվում են իր աշակերտներին ու հետևորդներին: Դրանք Հիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ դասեր են: Բարոյական, հոգևոր արժեքների փոխանցման յուրահատուկ աղբյուր են: Հիսուսն իր առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝ բարության, հանգստության, խոնարհության, մարդասիրության դասեր տալով:

Առակի ուսուցման ժամանակ հարկավոր է հաշվի առնել մի շարք կարևոր հանգամանքներ, որոնք թույլ կտան աշակերտներին առավել հեշտ ու պատկերավոր սովորեցնել առակների միտքն ու բովանդակությունը: Ուսուցիչը հստակ կերպով պետք է կարողանա տարանջատել հետևյալ կարևոր կետերը.

Նպատակը՝ սա առակի դասավանդման իմաստի ու կարևորության սահմանումն է, որը սովորողի մոտ առաջացնում է հետաքրքրություն տրված նյութը ուսումնասիրելու ու առակի իմաստը հեշտ ընկալելու հարցում: Նպատակի ձևակերպմամբ աշակերտը կկարողանա տարբերել բնորոշ լեզվառճական կիրառումները, կկարողանա տեսնել առակի կարևոր առանձնահատկությունը՝ դաստիարակիչ նշանակությունը, ունակ կլինի հասկանալու խոսքի տրամաբանությունը, կկարողանա վերաբերմունք արտահայտել առակի վերաբերյալ: **Ուսումնական նյութ՝** այն պետք է պարունակի առակը կազմող հնարավորինս պարզ ու ընկալելի նախադասություններ՝ գրված առանձին թերթիկներին կամ լինի դասագրքում զետեղված նյութին զուգահեռ տրվող վարժությունների տեսքով: **Առաջադրանքներ՝** դրանք պիտի լինեն մաքսիմալ հետաքրքիր ու չպարունակեն տարիքային տվյալ շեմից դուրս բարդ ու անհասկանալի պահանջներ ու լինեն հնարավորինս հասկանալի, հետաքրքիր ու նստվածք թողնող: Ինչպես օրինակ՝

- ***Վերականգնել առակը***, այս հանձնարարության մեջ կարևոր է հասկանալ աշակերտի ֆանտազիան, արագ կողմնորոշվելու կարողությունն ու հնարամտությունը,
- ***Վերնագրել,*** այս կետով, որպես լրացում նախորդ կետի՝ ի հայտ է գալիս աշակերտի ստեղծագործական ջիղն ու առակի բովանդակության ընկալումը:
- ***Գրել առակի իմաստը*** (ի՞նչ է սովորեցնում), սա այն կարևոր կետն է, որը ցույց է տալիս, թե աշակերտն ին՞չ հասկացավ կամ ի՞նչ դաստիարակչական դաս քաղեց տվյալ առակից,
- ***Գրել առակի իմաստին համապատասխան առածներ,*** սրանով ևս ակնհայտ է դառնում երեխայի ստեղծագործական տաղանդն ու երեխայի մոտ արթնանում է ինքնուրույն վերլուծելու ու միտքը ճշտ արտահայտելու կարողությունը,
- ***Հերոսներից մեկի անունից պատմել առակը***, այս կերպ երեխաներին հնարավորություն է տրվում հասկացածը պատմել՝ ընտրելով նախընտրած

հերոսին, սա թույլ է տալիս հասկանալ աշակերտի մտահորիզոնն ու ընտրված հերոսից էլ կարելի է մոտավոր ըմբռնել երեխայի պատկերացումները։

- ***Նկարազարդել***, այս մեթոդով երեխաները գույների միջոցով իրենց պատկերացումներն են հաղորդում տվյալ առակի վերաբերյալ և սա լավ հնարավորություն է ավելի գունեղ ու պատերավոր փոխանցել առակի միտքն ու տպավորել երեխաներին։
- ***Սցենար գրել և բեմադրել,*** այսպիսով երեխաներին հնարավորություն է տրվում դերերով խաղալ առակն ու հենց կերպարի վրա զգալ առակի ողջ միտքն ու խորությունը։

Այս մեթոդներով հնարավոր է երեխաներին ավելի մոտ ու ավելի խորը ընկղմել աստվածաշնչյան առակների ուսունասիրության մեջ։ Այդ առակներից ամեն մեկը ունի իր կուրահատուկ, դաստիարակող ու խրատող կողմը, ինչը, ինչպես նշեցինք վերևում ընթերցողին հասցվում է մաքսիմալ պարզ ու այլաբանական մոտիվներով։

Որպեսզի ավելի բարձրանա աստվածաշնչյան առակների դերն, ու բովանդակությունը ավելի հասանելի լինի, շատ կարևոր է դրանք մատուցել մաքսիմալ թեթև ու երեխաների տարիքին համապատասխան մեթոդների կիրառմամբ։ Ինչպես վերը նշված օրինակում է տրված, պետք է ավելի թեթև ու ավելի շատ աշակերտներին ներգրավելով անցկացնել առակների թեման։ Այդ կերպ երեխաները ավելի մեծ ոգևորությամբ ու մոտիվացիայով կխորանան առակի ուսումնասիրության մեջ ու այն կտա իր դաստիարակչական պտուղները։

Աստվածաշնչյան առակներից մի քանի օրինակներ և նրանց դաստիարակչական ենթատեքստը

Աստվածաշնչյան առակներից յուրաքանչյուրում հանդիպում են երկու հակադիր կողմեր՝ բարին ու չարը, որոնք հավերժական իրենց պայքարում հանդիպում են տարբեր սոցիալական ու գաղափարական աստիճաններում գտնվող մարդկանց ու ստեղծում են մի իրավիճակ, որտեղ երբեմն ինքը ընթերցողը պիտի հասկանա առակի վերջաբանը արդյոք արդար էր: Այսպիսով մի օրինակ ներկայացնենք ու բացատրենք թե տվյալ օրինակն ինչպես է ազդում երեխաների վրա կրթադաստիարակչական առումով:

Գյուղացին ու օձը

Աստված օձին վստահեց գանձի պահպանությունն ու հրամայեց խայթել գանձը գողանալ կամ վնասել փորձող մարդկանց: Բայց այնպես պատահեց, որ երաշտ եղավ, օձը սաստիկ ծարավեց: Այդ ժամանակ մի մարդ անցավ նրա մոտով՝ ձեռքին հեղուկով տարրա: Օձը ջուր խնդրեց և խոստացավ որպես վարձատրություն պատմել, թե որտեղ է թաքնված գանձը: Գյուղացին կաթ տվեց օձին, և նա ցույց տվեց այն քարը, որի տակ թաքնված էր գանձը: Բայց երբ տղամարդը ցանկացավ վերցնել գանձերը, Օձը հիշեց, որ իր գլխավոր պարտականությունն այդ գանձը պահպանելն էր: Նա գալարվեց ու փաթաթվեց գյուղացու պարանոցից ու փորձեց նրան սպանել: Գյուղացին վրդովվեց և առաջարկեց դիմել Սողոմոն թագավորին, որպեսզի նա որոշի, թե նրանցից ով է ճիշտ: Օձը համաձայնեց, սակայն պնդեց, որ չի իջնի գյուղացու պարանոցից քանի դեռ թագավորը որոշում չի կայացրել: Նրանք եկան Սողոմոնի մոտ: Սողոմոնը ուշադիր լսում էր նրանց հանդիպման պատմությունը և թե ինչպես են նրանք վեճի բռնվել: Օձն իր քայլը արդարացնում էր ասելով, որ բոլորն էլ նույն կերպ կվարվեին իրենց վստահված իրերը պաշտպանելու համար, իսկ գյուղացին էլ պնդեց, որ օձն իրեն ցույց է տվել գանձի տեղը՝ ջրի դիմաց: Սողոմոնը պատմությունը լսելուց հետո ասաց, որ յուրաքանչյուր ոք, երբ հանդիպում է օձի, պետք է նրա գլուխը կտրի: Այս խոսքի վրա գյուղացին մի քար վերցրեց և կոտրեց նենգ օձի գլուխը:

Այս առակը սովորեցնում է պահպանել խոստացված պայմանավորվածություններն ու չխախտել տված խոստումները, և եթե մեկը ստիպված է եղել խախտել իր պարտավորությունները, չպետք է խորամանկության

դիմի, այլ պետք է ընդունի իր սխալն ու փորձի արդար ճանապարհով լուծումներ գտնել։

Այս առակի բովանդակությունը բավականին պարզ ու հասկանալի է և երեխաներին սովորեցնում է հասկանալ խոստման նշանակությունն ու մարդկանց պատասխանել առանց նենգ ու դավադիր մտքերի։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե այն շատ պրիմիտիվ ու թույլ է իր բովանդակությամբ, սակայն իրականում, այն բավականին մեծ գաղափար ու խրատ է իր մեջ կրում։ Երեխաները այս առակի բովանդակությանը ծանոթանալուց և հետագայում լրացուցիչ վարժություններ կատարելուց հետո առավել խորությամբ են պատկերացնում իրենց քայլերի ու բառերի նշանակությունը։

Օրինակ՝ այս մեկ առակը, որը ևս Աստվածաշնչից է վերցված շատ լավ օրինակ է երեխաներին սովորեցնելու ներողամությունն ու կարեկցանքը։

Մի թագավոր կար, որ ուզեց իր ծառաների հաշիվները քննել։ Երբ նա հաշվեքննությունը սկսեց, նրա մոտ բերեցին մի պարտապանի, որ միլիոնավոր ոսկի պարտք ուներ։ Եվ քանի որ նա ի վիճակի չէր վճարելու այդ, տերը հրամայեց, որ նրան իբրև ստրուկի վաճառեն իր կնոջ ու զավակների հետ, վաճառեն նաև այն ամենը, ինչ ուներ, և պարտքը վճարեն։ Ծառան թագավորի ոտքերն ընկավ և աղաչեց՝ ասելով. «Համբերի՛ր և ժամանա՛կ տուր ինձ, և ես բոլորը կվճարեմ քեզ»։ Ծառայի տերը գթաց և պարտքը շնորհելով՝ ուղարկեց նրան։ Իսկ ծառան, հազիվ դուրս ելած, գտավ իր ծառայակիցներից մեկին, որը մի չնչին գումար էր պարտք իրեն։ Ծառան, նրա կոկորդից բռնելով, խեղդում էր նրան և ասում. «Վճարի՛ր ինձ քո պարտքը»։ Ծառայակիցը նրա ոտքն ընկավ և աղաչեց՝ ասելով. «Համբերի՛ր և ժամանա՛կ տուր ինձ, և ես պարտքս կվճարեմ»։ Բայց սա չուզեց լսել։ Ընդհակառակը, գնաց և բանտ նետել տվեց նրան, մինչև որ պարտքը վճարեր։ Երբ մյուս ծառաները տեսան պատահածը, շատ նեղվեցին. եկան ու իրենց տիրոջը պատմեցին այն ամենը, ինչ եղել էր։ Այն ժամանակ տերը կանչեց այդ ծառային և ասաց. «Չա՛ր ծառա, քո ամբողջ պարտքը քեզ շնորհեցի, որովհետև աղաչեցիր ինձ։ Պետք չէ՞ր, որ դու էլ ողորմեիր քո ընկերոջը, ինչպես ես ողորմեցի քեզ»։ Եվ տերը բարկանալով նրան հանձնեց դահիճներին, որպեսզի պատժեն, մինչև որ վճարի իր բոլոր պարտքերը։

Այս առակը ունի խորը դաստիարակչական ու բարոյախրատական ենթատեքստ։ Առակը սովորեցնում է լինել գթասիրտ, ներողամիտ ու վարվել դիմացինի հանդեպ այնպես ինչպես ինքդ կուզես, որ վարվեն քեզ հետ, հայտնի ոսկե կանոնի սկզբունքով առաջնորդվելով պահպանել մարդկային հարաբերությունները։ Այս հետաքրքիր ու միևնույն ժամանակ խրատական առակը ինչպես, ավելի փոքր, այդպես էլ մեծ տարիքի անձանց համար մադկանց հանդեպ վարվեցողության ու կարեկցանքի լավագույն օրինակներից է, որը դպրոցական տարիքից պետք է տրվի երեխաներին[3]։

Աստվածաշնչի մեկ այլ շատ հետաքրքիր առակ է փարիսեցու և մաքսավորի մասին առակը։

Երկու հոգի տաճար գնացին աղոթելու, մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր։ Փարիսեցին, մի կողմ կանգնած, ինքն իրեն աղոթում էր՝ ասելով. «Աստվա՛ծ իմ, շնորհակալ եմ քեզնից, որ ես ուրիշ մարդկանց նման հափշտակող, անիրավ, շնացող չեմ, կամ նման չեմ նաև այս մաքսավորին, այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և իմ ամբողջ եկամուտի տասանորդը տալիս եմ տաճարին»։ Իսկ մաքսավորը, մի քիչ հեռու կանգնած, աչքերն առանց վեր բարձրացնելու կուրծքն էր ծեծում և ասում. «Աստվա՛ծ, ների՛ր մեղավորիս մեղքերը»։

-Ասում եմ ձեզ,- եզրակացրեց Հիսուսը,- մաքսավո՛րն է, որ արդարացած տուն գնաց և ոչ թե փարիսեցին, որովհետև ով որ բարձրացնում է իր անձը, պիտի խոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, պիտի բարձրանա[4]։

Այս առակը սովորեցնում է խոնարհ ու համեստ լինել, չմեծամտանալ ու քիթը չցցել, չդառնալ գոռոզամիտ ու բարձրից նայել այլ մարդկանց, սովորել ներում հայցել ու չվախենալ ինչ որ տեղ էլ թերի լինել։

Ինչպես արդեն մի քանի անգամ նշեցինք առակների բովանդակությունը ուսուցողական ու դաստիարակչական բնույթ ունի և շատ մեծ կապ ունի, թե դպրոցական դասապրոցեսում այն ինչպես է ներառված և ինչպես են կազմակերպվում դասերը։ Աստվածաշնչյան առակները հատկապես աչքի են ընկնում իրենց բարոյախրատական ու ուսուցողական մոտիվներով։ Հատկապես Հիսուսի

[3] Մտ 18.23-34։
[4] Ղկ 18.9-14։

առակներում գլխավոր կերպարը մարդն է, նրա թերություններն են ու աստվածային ներմանն ու գթասրտությանն արժանանալու հիմնական գաղափարները։ Աստվածաշնչյան առակներում մարդու կերպարը կտրված չէ իրականությունից և ուղիղ ներկայացվում են այն բոլոր արատներն ու առավելությունները, որոնք մարդն առհասարակ ունի։ Թե՛ բարի սամարացին, թե՛ ապաշխարող մաքսավորը, թե՛ մոլախոտի դեմ պայքարող արտատերը, թե՛ աղքատ Ղազարոսը, թե՛ անառակ որդին, թե՛ երեք հացով օգնող բարեկամը, և թե՛ մյուս բոլոր կերպարները մեզ շրջապատող աշխարհում են ապրում և նրանցից յուրաքանչյուրին մենք մեր առօրյայում գոնե մեկ անգամ առնչված կանք ու այս առակների միջոցով երեխաները ծանոթանում են այդ կերպարներին ու ավելի պարզ են նայում իրենց շրջապատող աշխարհին։ Այս առակների միջոցով երեխաները սովորում են բարոյական ու կարևոր արժեքներ, որոնք նրանց ուղեկցելու են ողջ կյանքի ընթացքում։

Եզրակացություն

Ուսումնասիրելով առակագրության ժանրն ու աստվածաշնչյան առակների բովանդակությունն ու մեր պրակտիկայում դրանց կիրառական նշանակությունը՝ հանգեցինք հետևյալ եզրահանգումներին.

1. Առակագրությունը դեռևս հնուց մեզ փոխանցված գրական ստեղծագործական ժանր է, որով հեինակը այլաբանական միջոներով ընթերցողին է հասցնում խրատական ու ուսուցողական կարևոր ենթատեքստ ու դաստիարակող դեր է ստանձնում ընթերցողի համար։
2. Աստվածաշնչյան առակները իրենց բովանդակությամբ ու սյուժեյով հիմնականում ներկայացնում են իրական կյանքն ու մարդկային պարզ փոխհարաբերությունները։ Այստեղ առավել ցայտուն են ներկայացված Հիսուսի կողմից պատմվող խրատական ու դաստիարակչական առակները,մ որոնք առանձնանաում են իրենց պարզ ու հասկանալի թեմատիկայով։
3. Ինչպես ցանկացած դաս, այստեղ ևս շատ կարևոր է, որպեսզի նյութը հասցվի մաքսիմալ հեշտ ու հասկանալի մեթոդներով, որոնք կբարձրացնեն ուսումնական պրոցեսի արդյունավետությունը։ Քանի որ աստվածաշնչյան առակները իրենց հիմնական բովանդակության մեջ կրում են հոգևոր գաղափարներ, ուստի շատ կարևոր է դասավանդման մեթոդիկան ընտրել շատ զգուշությամբ ու չանտեսել նաև երեխաների առաջարկները։
4. Առակներից յուրաքանչյուրում արտացոլվող մարդկային պարզ փոխհարաբերություններն ու իրադարձությունները ցանկացածի համար՝ անկախ տարիքից, յուրովի են ընկալվում և առանձնահատուկ հետք են ունենում։ Առակները ոչ միայն սովորական գրական ժանրի մի մասն են, այլև մեր սովորական կենցաղի առավել այլաբանական ու պատմողական շարադրանքն են։
5. Աստվածաշնչյան առակների մեջ իրենց հատուկ տեղն ունեն նաև Սողոմոն Իմաստունի առակները, որոնց յուրահատկությունն ու բարոյախրատական գաղափարները ցանկացած տարիքում նորովի են ընկալվում։ Առակների հիմնական մասը ներկայացվում է Սոռմոն թագավորի կողմից որևէ լուրջ վեճի քննարկմամբ և վեճին արդարացի լուծում տալու մոտեցմամբ, ինչը առավել

հետաքրքիր է դարձնում առակի սյուժեն և ստիպում է մտածել, արդյոք, որպես թագավոր ու որպես մարդ նա արդարացի էր կամ անկողմնակալ։

6. Աստվածաշնչյան առակներում տեղ գտած խրատական ու դաստիարակչական առակները հիմնականում նպաստում են երեխաների մտահորիզոնի ու բնավորության որևէ գծի զարգացմանն ու կատարելագործմանը։ Աստվածաշնչյան առակները հիմնականում հոգևորի և աշխահիկի միաձուլմամբ ընթերցողին հաղորդում են մարդկային արժանիքների ու աստվածային դատաստանի առաջ արարքների համար պատասխան տալու կարևորությունը, ինչը դեռ դպրոցական սեղանից երեխաների մոտ պատասխանատվության ու զգոնության ցոցիչ է դառնում։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006։
2. Մ. Աբեղյան, Երկեր Դ, Երևան, 1966։
3. Ղկ 18.9-14։
4. Մտ 18.23-34։